

մը արդիւնաւորութեամբ գործել, և մասնաւորապէս իր խառնուածքովը՝ անմասն ու վեր մնալ ամէն տեսակ պայքարներէ: Հետեւաբար իր եռանդուն բնաւորութեամբ և աշխոյժովը նետուեցաւ Կ. Պոլսոյ յուզումնալից յորձանքին մէջ և պայքարի կեանք մը ունեցաւ: Դժբախտութիւն մըն է որ իր գործունէութիւնը ներկայացնող անաչառ պատմիչ մը չկայ: Իր աշակերտը և միանգամայն եղբորորդին Յակոբ քհ. Կեսարացի, յիշատակարանի մը մէջ շատ համառօտ տողերով — որոնք բաւական ալ չփոթ են — զայն կը ներկայացնէ՝ աւելորդ է ըսել՝ շատ մեծ գովեստներով:

Ժամանակակից երկու պատմիչներէն Առաքել Դաւրիժեցի, Գրիգոր վրդ. Կեսարացիի գործունէութեան շրջանակէն շատ հեռու միջավայրի մը մէջ ապրած, միշտ լաւ վերաբերում, յարգալից արտայայտութիւններ ունեցած է Գրիգոր վրդ. Կեսարացիին համար: Իր տեսութիւնները մեզի համար անոր համար աւելի մեծ կշիռ ունին որ անիկա ուղղակի շփում չէ ունեցած Գրիգոր Կեսարացիի հետ և չէ խառնուած անձնապէս ժամանակակից դէպքերուն, և հետեւաբար անձնական տեսակէտներ չեն պղտորած իր միտքը: Միայն ցաւալի է որ իր տեղեկութիւններ շատ սահ-